ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«26» սեպտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-98/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի 09.09.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 09.09.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկի կարիքների համար՝ Երևանի թիվ 191 դպրոցի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգին, և ըստ գնահատող հանձնաժողովի որոշման զբաղեցրել է երկրորդ տեղը, իսկ առաջին տեղը

զբաղեցրել է «Ագարակ» ԲԲԸ-ն: Ընկերությունը գրությունով գնահատող հանձնաժողովից պահանջել է «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտի, գնային առաջարկի և որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի պատճենները: Ուսումնասիրելով հանձնաժողովի կողմից իրենց ներկայացված պահանջված փաստաթղթերի պատճենները՝ պարզել են, որ «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից ներկայացրած հայտի բոլոր փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկը, տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Այսինքն պատճենահանելու դեպքում էլեկտրոնային թվային ստորագրությունը չի արտացոլվում փաստաթղթերի վրա: Իսկ իրենց կողմից ներկայացրած հայտի փաստաթղթերը պատճենահանելու դեպքում հստակ արտացոլվում է էլեկտրոնային թվային ստորագրությունը, և եթե փաստաթղթի վրա չի արտացոլվում էլեկտրոնային թվային ստորագրությունը, ապա փաստաթուղթն օրինական ուժ չունի, հետևաբար «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից ներկայացրած հայտը չի բավարարում հրավերով սահմանված 7.9 կետի պահանջները:

Ըստ հրավերի 7.9 կետի՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատվում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, սակայն «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից ներկայացրած մասնակցության հայտի փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Գտնում են, որ խախտվել է գնումների մասին ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի, թիվ 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետով նախատեսված «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով հրավերի պահանջները:

Ընկերությունը նշել նաև, որ գնահատող հանձնաժողովը «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից ներկայացրած հայտի փաստաթղթերում էլեկտրոնային թվային ստորագրության բացակայության վերաբերյալ սխալ հարցում է ուղարկել համապատասխան մարմնին, և կից ներկայացրել են գնահատող հանձնաժողովի 19.08.2016թ. N 3 արձանագրության պատճենը:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է.

1. դադարեցնել ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ-ի կողմից կազմակերպված «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի կողմից՝ «Ագարակ» ԲԲԸ-ի հայտը բավարար գնահատելու, «Ագարակ» ԲԲԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու, «Ագարակ» ԲԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու, «Ագարակ» ԲԲԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումները:

2. Մերժել «Ագարակ» ԲԲԸ-ի հայտը:

3. Կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել պայմանագիր կնքելու գործընթացը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 16.09.2016թ. ժամը 16:00-ին ԳԲԽ-98/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի տնօրենը պնդել է բողոքով ներկայացրած դիրքորոշումը և հայտնել է, որ «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից ներկայացրած հայտի բոլոր փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ և պատճենահանելու դեպքում էլեկտրոնային թվային ստորագրությունը չի արտացոլվում փաստաթղթերի վրա, իսկ իրենց կողմից ներկայացրած հայտի փաստաթղթերը պատճենահանելու դեպքում հստակ արտացոլվում է էլեկտրոնային թվային ստորագրությունը:

Ընկերությունն, ի լրումն 09.09.2016թ. ներկայացված բողոքի, 23.09.2016թ. թիվ 09/8126-16 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին հայտնել է, որ «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.09.2016թ. նիստի որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչել «Ագարակ» ԲԲԸ-ին և որոշում է կայացրել պայմանագիր կնքել «Ագարակ» ԲԲԸ-ի հետ: Մոտ մեկ շաբաթ անց գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգին ներկայացրած հայտը մերժվել է՝ հիմք ընդունելով Հայաստանի հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարցման պատասխանն այն մասին, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացրած գնային առաջարկից, որը չի համապատասխանում իրականությանը:

Ընկերությունը խնդրել է կրկին անգամ հարցում կատարել Հայաստանի հանրապետության պետական եկամուտների կոմիտե, դրական պատասխանի դեպքում չեղյալ համարել գնահատող հանձնաժողովի՝ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու որոշումը:

2. ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 20.09.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ:

«Ագարակ» ԲԲԸ-ի հայտում առկա փաստաթղթերը հաստատված են այն ներկայացնողի էլեկտրոնային թվային ստորագրությամբ. ապացույց՝ նշված փաստաթղթերը գտնվում են էլեկտրոնային գնումների համակարգում՝ armeps.am կայքում, որոնք ստուգվել են բողոքը քննող հանձնաժողովի կողմից 16.09.2016թ. նիստի ընթացքում ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի ներկայացուցչի ներկայացմամբ և ներկայությամբ:

Բողոքը քննող հանձնաժողովը համոզվել է, որ վերոհիշյալ փաստաթղթերը հաստատված են այն ներկայացնողի էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Ստուգումը կարելի է կրկնել ցանկացած ժամանակ:

Էլեկտրոնային գնումների դեպքում ներկայացված փաստաթղթերը գնահատվում են էլեկտրոնային գնումների համակարգում՝ armeps.am կայքում: Էլեկտրոնայի գնումների կարգավորման որևէ փաստաթղթով /գնման գործընթացի հրավերով ևս/ սահմանված չէ, որ էլեկտրոնային միջոցներով /armeps.am կայքով/ ներկայացված փաստաթղթի գնահատման համար պետք է գնահատել նաև փաստաթղթի պատճենահանված թղթային տարբերակը:

Ելնելով վերոգրյալից՝ Պատվիրատուն գտնում է, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով գնման գործընթացով ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի ներկայացուցիչը «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով գնման գործընթացի հաղթող մասնակցի՝ «Ագարակ» ԲԲԸ-ի հայտն ամբողջությամբ և հրավերով սահմանված որոկավորման պահանջներին «Ագարակ» ԲԲԸ-ի համապատասխանությունը հիմնավորող բոլոր փաստաթղթերը /էլեկտրոնային/ 16.09.2016թ. ներկայացրել է բողոքը քննող հանձնաժողովի քարտուղարին:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 16.09.2016թ. ժամը 16:00-ին ԳԲԽ-98/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկի ներկայացուցիչն առարկել է բողոքի դեմ և հայտնել է, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ «Ագարակ» ԲԲԸ-ի հայտում առկա փաստաթղթերը հաստատված են այն ներկայացնողի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչը կարող է ստուգվել էլեկտրոնային գնումների համակարգում՝ armeps.am կայքում: Ներկայացուցիչը հայտնել է նաև, որ էլեկտրոնային գնումների դեպքում ներկայացված փաստաթղթերը գնահատվում են էլեկտրոնային գնումների համակարգում և որևէ փաստաթղթով սահմանված չէ, որ էլեկտրոնային միջոցներով ներկայացված փաստաթղթի գնահատման համար պետք է գնահատել նաև փաստաթղթի պատճենահանված թղթային տարբերակը:

3. ԳԲԽ-98/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-98/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կարիքների համար Երևանի թիվ 191 դպրոցի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն և «Ագարակ» ԲԲԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի 7.9 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են ***էլեկտրոնային թվային ստորագրությամբ:***

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Գնահատող հանձնաժողով) 29.08.2016թ. թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ագարակ»

ԲԲԸ-ի հայտը գնահատել է բավարար և առաջին տեղ զբաղեցնող մասնակից է հայտարարել «Ագարակ» ԲԲԸ-ին:

4. Գնահատող հանձնաժողովը Ընթացակարգի արդյունքում 02.09.2016թ. թիվ 4.1 կետով որոշում է կայացրել «Ագարակ» ԲԲԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.09.2016թ. թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրել է, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից, ինչի հիմքով էլ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել է:

6. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 16.09.2016թ. ժամը 16:00-ին ԳԲԽ-98/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ Պատվիրատուի ներկայացուցչի կողմից մուտքագրված www.armeps.am էլեկտրոնային գնումների համացանցային կայքի ուսումնասիրման համաձայն՝ «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի «pdf» տիպի բոլոր էլեկտրոնային ֆայլերի վրա առկա է էլեկտրոնային ստորագրություն՝ «Rev.1:Signed by BARSEGHYAN KARAPET 2010520432» գրառմամբ:

4. ԳԲԽ-98/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի 09.09.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կարիքների համար Երևանի թիվ 191 դպրոցի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգի հրավերը (այսուհետև նաև՝ Հրավեր), «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), «Ագարակ» ԲԲԸ-ի ներկայացրած հայտը, www.armeps.am էլեկտրոնային գնումների

համացանցային կայքը, գտնում է, որ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի 09.09.2016թ. ներկայացրած բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, ***հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելու դեպքերում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս ***փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:***

Հրավերի 7.9 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են ***էլեկտրոնային թվային ստորագրությամբ:***

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 16.09.2016թ. ժամը 16:00-ին ԳԲԽ-98/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ Պատվիրատուի ներկայացուցչի կողմից մուտքագրված www.armeps.am Էլեկտրոնային գնումների համացանցային կայքի ուսումնասիրությունից երևում է, որ «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի «pdf» տիպի բոլոր էլեկտրոնային ֆայլերի վրա առկա է էլեկտրոնային թվային ստորագրություն՝ «Rev.1:Signed by BARSEGHYAN KARAPET 2010520432» գրառմամբ, որտեղ երևում է նաև էլեկտրոնային ստորագրության հեղինակի անուն ազգանունը («Ագարակ» ԲԲԸ-ի տնօրեն՝ Կարապետ Բարսեղյան), ինչպես նաև ստորագրության վավերացման օրն ու ժամը:

Կենտրոնը գտնում է, որ անհիմն է «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի բողոքի այն պնդումը, որ «Ագարակ» ԲԲԸ-ի կողմից ներկայացրած հայտի բոլոր փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» պետական հիմնարկի կողմից կազմակերպված «ՔՆՔԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/9» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 29.08.2016թ. թիվ 4 արձանագրությամբ կայացված «Ագարակ» ԲԲԸ-ի հայտը բավարար գնահատելու և առաջին տեղ զբաղեցնող մասնակից հայտարարելու, 02.09.2016թ. թիվ 4.1 կետով կայացված «Ագարակ» ԲԲԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումները դադարեցնելու և «Ագարակ» ԲԲԸ-ի հայտը մերժելու պահանջների վերաբերյալ «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից Կենտրոնին 09.09.2016թ. ներկայացրած բողոքն անհիմն է և առաջարկում ենք այն մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝
Պետի տեղակալ՝ Հ.Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի վարիչ Մ.Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-98/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Դավթյան